**Արձանագրության 3**

**Երևան քաղաքի Մարգարյան փողոցի զբոսայգու ջրավազանի վերանորոգման նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման և փորձաքննության եզրակացության տրամադրման աշխատանքների ձեռքբերման « ԵՔ-ԳՀԱՇՁԲ-19/47» ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի նիստի**

ք. Երևան

19.06.2019թ.
ժամը՝ 11:30

Մասնակցում էին

| | |
|---|---|
| Հանձնաժողովի նախագահ՝ | Ա. Մարտիրոսյան /ԳԱՊ/ |
| Հանձնաժողովի անդամներ՝ | Ս. Գևորգյան գնահատող/, Բ. Տեր-Թովմասյան /գնահատող/, Լ. Գևորգյան /բացող/, Ե. Մատայան /բացող/ |
| Հանձնաժողովի քարտուղար՝ | Ա. Համբարձումյան |

**1. ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից ներկայացված եզրակացության մասին**

---

(Ա. Մարտիրոսյան)

1. Ընդունել ի գիտություն որ.

1.1 «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» ՀՀ կառավարության 526-Ն որոշմամբ հաստատված կարգի /այսուհետ՝ Կարգ/ 43-րդ կետի 3-րդ ենթակետի՝ հարցում էր ներկայացվել առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների առկայության վերաբերյալ:

ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից սահմանված ժամկետում ներկայացվել է եզրակացություն, համաձայն որի մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով չունի գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված շեմը գերազանցող ժամկետանց հարկային պարտավորություն:

*Ընդունվել է որոշում՝ կողմ – 5 դեմ - 0:*

**2. Ընթացակարգի հայտերի գնահատման արդյունքների հաստատման մասին**

---

(Ա. Մարտիրոսյան)

Հիմք ընդունելով սույն արձանագրության 1-ին կետը՝ հանձնաժողովը որոշեց հաստատել ընթացակարգի առաջին տեղ զբաղեցրած մասնակցի հայտի գնահատման արդյունքները.

| Մասնակցի անվանումը | Հայտի գնահատականը |
|---|---|
| «Սարգիս եւ Մարիաննա» ՍՊԸ | Բավարար |

*Ընդունվել է որոշում՝ կողմ - 5 դեմ - 0:*

**3. ԵՔ-ԳՀԱՇՁԲ-19/47 ծածկագրով գնման ընթացակարգի ընտրված մասնակցի և պայմանագիր կնքելու որոշում ընդունելու մասին**

---

(Ա. Մարտիրոսյան)

3.1 Հիմք ընդունելով սույն արձանագրության 2-րդ կետով ընդունած որոշումը՝ ԵՔ-ԳՀԱՇՁԲ-19/47 ծածկագրով ընթացակարգի ընտրված մասնակից հայտարարել «Սարգիս եւ Մարիաննա» ՍՊԸ-ին և վերջինիս ներկայացնել **Երևան քաղաքի Մարգարյան փողոցի զբոսայգու ջրավազանի վերանորոգման նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման և փորձաքննության եզրակացության տրամադրման աշխատանքների կատարման** պայմանագիր կնքելու առաջարկ,

3.2 Հաշվի առնելով, որ ընթացակարգին միայն մեկ մասնակից է հայտ ներկայացրել՝ անգործության ժամկետ կիրառելի չէ:

*Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:*

**4. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման ժամանակացույցը հաստատելու մասին**

---

(Ա. Մարտիրոսյան)

- Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել գնման պայմանագիր կնքելուն օրվան հաջորդող աշխատանքային օրը ժամը 11:40-ին, Երևանի քաղաքապետարանի վարչական շենքում, հասցե՝ ք. Երևան, Արգիշտի փողոց 1:

*Ընդունվել է որոշում՝ կողմ – 5,դեմ - 0:*

Հանձնաժողովի

Նախագահ՝ ---------------------------------------- Ա. Մարտիրոսյան

Անդամներ՝ ---------------------------------------- Ս. Գևորգյան

---------------------------------------- Լ. Գևորգյան

---------------------------------------- Ե. Մատայան

---------------------------------------- Բ. Տեր-Թովմասյան

Քարտուղար՝ ---------------------------------------- Ա. Համբարձումյան